

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրության գրասենյակը գտնվում է Թիֆլիսի 10-2 թիվ
(բացի կիրակի և առաջօրեքից).

Յայտարարությունները ընդունվում են ամեն լիցիտով.

Յայտարարությունները համար վճարում են
խլրաքանչիւր տողական 10 կոպեկով.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կազմակերպության կարեւորությունը.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թաղային. Նամակ
Բազմութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին
լուրեր.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցահան-
դէսը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՎՈՐԹԻՒՆԸ

Կովկասեան ցուցահանդէսը և նրա հետ
զուգընթաց կերպով տեղի ունեցող ժողով-
ները դրուում են մեզ առջև յաճախ կանգ
առնել մեր արդիւնագործութեան վերա-
բերելով խնդիրներին վրա: Այժմ յարմար ա-
ռիթ և դէպք է ներկայանում մեր տըն-
տեսական մի քանի կարեւոր խնդիրները
հանդէս բերելու և նրանց վրա դարձնելու
հասարակութեան ուշադրութիւնը:

Ցուցահանդէսը և ժողովները մի անգամ
ևս պարզեցին մեր առաջ թէ որքան, ար-
դարեւ, հարուստ բնութիւն ունի Կովկասը
և թէ ինչ աստիճան մենք հեռու ենք այն
կատարելութիւնից, որին մենք պէտք է
հզոտենք հասնելու: Սակայն ժամանակը
գնում է արագ կերպով և մեր կորցած
ամեն մի օրը դժուարացնում է մեր դրու-
թիւնը համաշխարհային մրցութեան մէջ
և մեզ ինչ և ձգում այն տեղից, որը մենք
կարող էինք լինելու: Եթէ զործ-
դնէինք աշխատելու այն եղանակները, ո-
րոնցով հրաշքներ են գործում Մարսիան
և Ամերիկան: Այդ երկիրները, որոնք ար-
դէն անասելի մեծ չափով ուժեղ և բարձր
են մեզից, գործում են իրանց մտաւոր և
կուլտուրական բոլոր ընդունակութիւննե-
րով և եռանդով. իսկ մենք, որ թող ենք
և տկար, չենք դործ գնում մեր առաջա-
դիմութեան վրա և այն ոյժերը, որ ու-
նենք մեր երկրում:

Մեկտեղած, մեզ խնդրում է և այն
հանգամանքը, որ մեր մէջ տեղի չունեն
խելացի և նպատակայարմար կազմակեր-
պութիւններ, որոնք իրանց ձեռքն առնե-
լին տեղական արդիւնագործութեան զար-
գացման հոգսերը և նրա ղեկավարութիւ-
նը: Մենք չունենք ղեմավոր, մենք չունենք
ընկերակցութիւններ, ընկերակցութիւններ,
միայն և կոմիտեաներ, նահանգական և
գաւառական խորհուրդներ, որոնք զբաղ-

վելին գեղատնտեսութեան կարեւոր խն-
դիրների մշակութեան գործով:

Այդպիսի կազմակերպութիւնների կա-
րեւորութիւնը աչքի է ընկնում ամեն ան-
գամ, երբ հարց է յարուցվում գեղատն-
տեսական ղեկավարութեան մասին: Հաս-
կանալի է թէ ինչու ներկայումս Թիֆլի-
սում տեղի ունեցող կաթնամշակութեան
ժողովը իր նոյն իսկ առաջին նիստում
կանգ առաւ այդ կարեւոր խնդրի վրա
և հանդէս բերեց նրան միահամուռ
համակրութեամբ: Մնում է, որ յարուց-
ված հարցը կարողանար բաւարար գործ-
նական լուծում ստանալ և իսկապէս ազ-
դել արդիւնագործութեան այդ ձիւղի
բարգաւաճմանը մեր երկրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Վերանայի՛ր դրամ 5 դրոմ. Վ. Հիւզոյի
(Շարունակութիւն)

Հայնէն մի տեղ շատ արածով կերպով նկա-
տում է, որ ֆրանսիական դրամատուրգները
«ազատագրված ստորկներ» են: Կլասիկական
դրամայի հետքերը միանգամայն դեռ չեն ան-
հետացել՝ արհաւիրքի և դժբաղդութեան մի
և նոյն ուրուականները՝ մի և նոյն թոյնը
և դաշտը: Այս պակասութիւնը որոշ չափով
նկատելի է և Հիւզոյի մօտ, որովհետեւ ինչ-
քան էլ նա «ազատագրված» լինէր՝ այսպէս
թէ այնպէս մնում է նոյն ֆրանսիացին, որ ի
քնէ գերասան է, կեանքն էլ երբեմն սիրում
է դերասանական ակնոցներով դիտել իֆֆէկտ
և հետաքրքրութիւն, չարժան և փոթորիկ,
կիրք և զարդարուն զգացումներ—անա ֆրան-
սիացիների սիրած տարրերը բնի վրա: Այս
տարրերի ծայրահեղ արտայայտութիւններին
կարելի է յաճախ պատահել «Թուրաններ» հե-
ղինակի մօտ: Նա սիրում է առնառարակ թէ
դրութիւնների և թէ ընտանիքների խիստ
հակադրութիւններ—մի առանձնայա-
կութիւն, որով աչքի են ընկնում նաեւ Կոր-
նելլի թատերգութիւնները, այն ինչ Բաֆի
ստեղծագործութիւնները աւելի մեղմ և ներ-
դաշնի ընտանիքներ են կրում: Վերանայի՛ր
Հիւզոյի սէրը դէպի հակադրութիւնները ար-
դէն աւելի շոյափելի է. օրինակ զործող գոր-
ծողութեան մէջ, երբ դաւադիրները միաձայն
աղաղակում են. «ճա՛հ. դո՛ն Կարլոսին, մա՛ն

դոն Կարլոսին» և սպանութեան գործն արդէն
պէտք է սկսվէր՝ յանկարծ լսվում է թնդանո-
թի երեք հարուածը: Կարլոսի կայսր ընտրվե-
լու նշանը. նոյնպէս վերջին գործողութեան
մէջ, երբ սիրած զոյգն արդէն բաղդատուված
բարձր հոգեզմայլութեամբ պատրաստվում է
ամուսնութեան առաջին օրը վայելել հեռուից
լսվում է ճակատագրական փողի ձայնը՝ էք-
սանի մահվան ուրուականը: Հիւզոն սիրում
է առանձնապէս ագեղը, զարհուրելին նկարա-
գրել, որ երբեմն անտանելի չափազանցու-
թեան է հասնում, օրինակ թոյնի ներգործու-
թեան տեսարանը վերջին գործողութեան մէջ,
որը յիշուի միանգամայն զարհուրելի է: Բայց
տեղի, օտարափելիի նկարագրութիւնը Հիւ-
զոյի մօտ երբեմն բոլորովին անբնական է,
արւեստական և եթէ կարելի է ասել՝ զար-
դարուն Այն ինչ Դիւման (հայրը) այդ մի և
նոյն հակութիւններին հետ դռնէ այն առաւելու-
թիւնն ունի, որ իրականը՝ կեանքի տգե-
ղութիւնն է նկարագրում սովորաբար և
չափազանցութիւնների մէջ շատ քիչ անգամ
ընկնում: Թէեւ Հիւզոն իր «Կորմիլլէ» առա-
ջարանում ասում է, որ դրամայի նպատակն
է ներկայացնել «կեանքի ինչպէս որ է», բայց
նա միշտ հաւատարիմ չէ մնաց այս սկզբունքին:
Էրնանիի դերը կատարում էր պ. Աբէ-
լանը, դրամատիկական այն վայրկեանները,
որոնք, ինչպէս ասացինք, Հիւզոն սիրում է
լիբրետական զեղծմաներով ուժեղացնել, ամենից
լաւ էին այդպիսի պարոնիմ: Բոլորովին սիրող
լոյզերը, հայրենական և մանաւանդ անձնա-
կան վրէժխնդրութեան զգացումները, ասպե-
տական աւանդութիւնների ոգին, որոնք առա-
ջին տեսարանից սկսած փոթորկում են ազ-
նուական «բանդիտներ»—բաւականին ազդու
արարայատութիւն էին գտնում նրա խաղում:
Նա առանձնապէս աչքի էր ընկնում դոն Կար-
լոսին երկրորդ անգամ մենամարտի հրաւիրե-
լիս, նաեւ հիւրանքի, ապա քաղաքի «աղո-
թիւն», ինչպէս և այդ նոյն դուքսի անողոք
կամակորութեան զոհվելիս—վերջին գործո-
ղութեան մէջ:

Պ. Պետրոսեանը խաղում էր դոն Կարլոսը:
Պէտք է նկատել, որ դոն Կարլոսը նոր պատ-
մութեան ամենահետաքրքիր դէպքերից մէկն է:
Գերմանական և սպանական արեան խառ-
նուրդի մի ծնունդ է նա, բայց աւելի չուժ իս-
պանացի լինելով գերմանացի: Թէեւ երբեմն
տառամուլող, ուտապիական հակումներից ոչ
ազատ, բայց բաւականին խելօք, հետաքրք-
րականութիւնների, մանցողութեան պատմանե-
րի, օգերեւութաբանական պայմանների, աղ-
գարնակութեան անման ու առողջապահական
վիճակի մասին և այլն:

Այդ դիպագրումները չարված են պատի վրա,
բայց այնքան մօտ-մօտ, որ գրեթէ ծածկում
են միմեանց և անտեսանելի են դարձնում
աղեկականների շատերը: Հարկաւոր է օր առօր
հեռացնել այդ անյարմարութիւնը: Ինչպէս վե-
րուում նկատեցինք Բազուն Կովկասի անտե-
սական կեանքի կենտրոնը կարող է համարվել
Բայց ուս մեծ նշանակութիւն ունի նաեւ ամ-
բողջ Ռուսաստանի համար, որովհետեւ Կաս-
պից ծովի ամենալաւ նաւահանգիստն է և
ներկայացնում է մի տեսակ պահեստաւոր
այն ապրանքների, որոնք Մարսիայից ու Ռու-
սաստանից արտահանվում են դէպի Պարս-
կաստան և Անդրկասպեան երկիրը: Դրա վրա
աւելացրէ՛ք նախկին հարուստ արդիւնաբե-
րութիւնը և այն ժամանակ հասկանալի կը
լինի նրա բարգաւաճման ու մեծութեան պատ-
ճառները:

Բազուն զգալի առաջադիմութիւն է ցոյց
տուել գլխաւորապէս վերջին տասնամյակում
(1890—1900): Այդ կարճ ժամանակաշրջանում
նա չափազանց մեծացրել է իր տարածութիւնը
և աւելացրել է աղաքանակութիւնը: Այսպէս
օրինակ 1896 թուականին նա ունէր 86,611
բնակիչ, 1897 թ.—112,253, իսկ ներկայումս—
Բազունի նահանգական վիճակագրական մաս-

ղաքագէտ էր նա. դոն Կարլոսը շատ լաւ գի-
տակցում էր, որ ինքը իր ժամանակվայ ա-
մենաազդեցիկ միակն է. իր դիրքը աւելի
բարձրացնելու և մանաւանդ իր վտանգաւոր
հակառակորդին՝ ֆրանսիական թագաւոր Ֆրանց
Ի-ին ընկճելու համար նրա ջերմ ցանկութիւնն
էր գերմանական կայսր դաւանալ, որի աջո-
ղութեան համար նա չը խնայեց և ոչ մի մի-
ջոց: Իբրեւ քաղաքագէտ լինելով բուն սպա-
նիացի՝ նա մասնաւոր կենցաղում մնում էր նոյն
սպանիացին. հարաւային կրակոտ երկնքի տակ
նա ժառանգել էր ցօփ կեանքի, զգայական
կրքոտ հաճոյասիրութեան սողմերը: Վերա-
նդում ահա դոն Կարլոսի վերոյիշեալ պատ-
կերք բաւականին պարզորոշ կերպով է ուրուա-
գծված: Պ. Պետրոսեանը իր խաղով թէ կըր-
քոտ և թէ փառասէր թագաւորի դերն ընդ-
հանրապէս լաւ տարաւ: Չորրորդ գործողու-
թեան նշանաւոր մենախօսութիւնը՝ «Կարմին»,
ներքին նա սկսեց ազդու շնչառով և արտասա-
նեց պարզ առոգանութեամբ: Այս մենախօսու-
թիւնը դրամայի ամենափայլուն կէտերից մէկն
է, որովհետեւ Կարլոսի ամբողջ էութիւնը հա-
մարեա զրոյթված է այնտեղ մի քաղաքակ-
մբկութեամբ. փառասիրութեան ծայրաւ, տե-
նայնք կայսր դաւանալու, միւս կողմից աշխար-
հային փառքի ունայնութեան գիտակցութիւնը,
որ մասամբ նոյնպէս առիթ տուեց նրան ինք-
նակամ հրաժարվել կայսերական դասից և
սպանիական մի մենաստանում անցկացնել իր
վերջին օրերը:

Դոնէա զը Սօլը չը նայելով իր բոմանտիկա-
կան մի քանի յատկութիւններին՝ դրամայի,
այսպէս ասած, ամենաբնական դէպքերից մէկն
է: Սպանիացի կրակոտ աշուտականութիւնն սի-
րում է «աւազակայական» անպայման կերպով.
Նրա զգացումները միանգամայն վճիռ է, մա-
քուր, անխաղախ, կայսրի առաջարկութեան
փոխարէն նա մի ճարտիկ հարապրութեամբ
նրա դաշտին է խլում և ինքնապաշտպանու-
թեան դիմում: Նոյն դաշտին նա խնամքով պա-
հում է ապագայում դուքսից իրան պաշտպա-
նելու. և այս բոլորը միմյանի էրնանիի հա-
մար: Տիկին Սերանոյին, որ իր դերում առ-
հասարակ աջող էր, սկզբում կարծես պակա-
սում էր հարաւային կրակը, որը սակայն հետգ-
հեղէ արծաթեղեղ և վերջին գործողութեան
մէջ՝ իր անողոք հորեղբոր պաղատելիս ուժ-
գին բռնկման հասում:

Պ. Ստեփանեանը, խանգոտ և ասպետական
անջինջ աւանդութիւններով տողորված դուքս

նախողովի հաւաքած տեղեկութիւնների համե-
մատ—201,622 բնակիչ *) 1898 թ. ամբողջ
քաղաքում եղել են ընդամենը 5,895 չինու-
թիւն **), իսկ այժմ այդ թիւը հասել է ար-
դէն 8,000-ի:

Այդպիսի խնտնորով առաջադիմութեան ըն-
թացքում քաղաքը բարեկարգել է նաեւ իր
արտաքին տեսքն ու նիւթական վիճակը: Իբրեւ
ապացոյց, բաւական է վերցնել փողոցները.
1883 թ. քաղաքի փողոցների տարածութիւնն
էր միայն 1,256,4 քառ. սաժէն, իսկ այժմ—
101,152,41 քառ. սաժէն: Զը քաղաքը մնում է
միայն 38,293,89 քառ. սաժէն, որի համար
արդէն նշանակված է 100,000 ռուբլի:

Քաղաքի նիւթական վիճակի մասին գաղա-
փար կարելի է կազմել միայն այս տարվայ
բիւլետէնից, որ ներկայացնում է մի պատկառե-
լի գուճար—1,585,379 ռ. 49 կոպ. Այդ գու-
ճարից նշանակված է:

Քաղաքի բարեկարգութեան համար 189,155 ռ.
Ոստիկանութեան պահպ. համար. 109,466 »
Հրդեհաշիջման » 24,881 »
Հասարակական բարեգործ. » 39,278 »
Դպրոցական գործի » 304,820 »
Քաղաքային ինքնավարութ. » 166,305 »

Այդ պերճախօս թւերը ցոյց են տալիս, թէ
Բազուն տնտեսապէս սրբան բարձր է Կովկա-

*) Անցեալ 1897 թ. միօրագրութեան ժամանակ
Թիֆլիսն ունէր 160,645 բնակիչ:
**) В. Вульфовъ: „Къ планамъ гор. Баку“.

b. p.

գրողի հեղինակութիւնները Արդէն այժմ յայտնի են տեղեկութիւններ 18 հրատարակութիւններ մասին, որոնցից մէկը գուրա կը գայ լեհերէն լեզուով, իսկ երեքը կը լինեն պատկերազարդ: Գոգոլի հեղինակութիւնները մեծ մասամբ կը հրատարակվեն մի հատորով եւ կարծես 50 կօպէկից սկսած մինչեւ 2 ռուբլի:

ՄԱՄԱՆԱՐ գիւղից (Էջմիածնի գաւառ) մեզ գրում են. «Այստեղ պատահեց մի շատ ցաւալի դէպք: Մի կին, իրանց կտուրի վրա դիպած կանեւիք իջնելու նպատակով, բարձրանում է իրանց բակի պատի վրայով: Սակայն յետ դառնալիս, ինչպէս է լինում, պատից պարսկի գլխովայր փողոցը, որից նրա ուղեղը վնասվում է եւ մեռնում է: Մարդու սիրտը մօրմոքում էր հանգուցեալի որբերի գոռում-գոլումից»:

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Ամսիս 7-ին մեզ հարեան Գիւլուգ կոչված թուրքաբնակ գիւղում ջրադացի մէջ սպանվեց Արգուլան անունով մի թուրք, մեր գաւառի յայտնի գողերից մէկը: Մի քանի ամիս արանից առաջ սպանված թուրքը իր մի ջանքի համախոս ընկերներով կողոպտած է լինում մի հարուստ պարսկի տուն: Աւարը բաժանելուց յետոյ ընկերներից մէկը իմացած է լինում, որ իրը թէ Արգուլան ծածկել է իրանցից մի տարձանակ եւ մի արծաթէ կանացի գօտի, ստիպում է տալ եւ մի քանի անգամ սպաննում է օպանել նրան, եթէ չը տա՞նաւ իր ուզածը. բայց նա անուշադիր է մնացել, ուստի եւ սպանել է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, սեպտեմբերի 22-ին
Ինչքան աննշան է անհատի մը դիրքը մարդկային դէպքերու հոսանքին մէջ հօգ չէ թէ որքան ալ բարձր լինի իր պաշտօնին աստիճանը: Դեռ քանի մը օր առաջ Ամերիկայի մէկ ծայրէն միւսը փոթորկեր էր, Մաք-Կինլիի ողբերգական մահը յուզեց էր ամէն սիրտ, այսօր կամայ կամայ մոռացման կը դատարարուի: Ինչ, հասարակաց ուշադրութիւնը չը դառնայ դէպի ապրող նախագար: Միտաւ իրագործը, կեցցէ թագաւորը, հաւ իրականութեան ճշշմարտ պատկերը: Դեռ հասարակաց չէնքերուն վրա քառմիկ կը շարժէ սեւ լաթերու շարքերը: Երեսնամեակներ չինկու հանգանակութիւններ կը կատարուին, հոս ու հոն առեւտրականներ մեռնողին կեանքը կը ներքոցեն, սակայն ընդհանուր ժողովուրդը երեսնայի պէս միայն քանի մը վայրկեանի ցաւ գգաց, կարծես խաղալի մէք, որ կը փոխէր:

Այդ կերպ չէր սակայն խորհողներու դատաւարներ: Գիտնալով որ «Մշակը» հեռագիրներով դէպքին մանրամասնութիւնները շուտ կը հաղորդէ, ուղեցի օպանել մինչեւ անցնի փոթորիկը, հանդարտին կիրքերը եւ տենեմ թէ ինչ դատողութիւն պիտի յայտնեն բարեկամ ու թշնամի թերթեր, հասարակաց անաչառ կարծիքը ինչ տեղ պիտի տայ Մաք-Կինլիին, որուն վարչութեան օրով Ամերիկայի հանրապետութիւնը ծանրակշիռ դէպքերու շրջանակէն անցած է: Ստոյգ է թէ հանրային գործիք մը արժանիքը չափուելու համար դեռ շատ երկար տարիներ պէտք է անցնեն, պէտք է, որ դեռ փորձի վիճակի մէջ օրէնքներ եւ ձեռնարկներ իրենց արդիւնքը ցոյց տան, պէտք է մասնաւոր որ կուսակցական հաշիւներ մաքրվին, որ պատմութիւնը տայ իր վերջնական վիճակը:

«Նախագահ Մաք-Կինլի պատմութեան կը վերաբերի», գրեց թերթ մը, սակայն պատմութիւնը գինը իր էջերուն մէջ արձանագրելու համար դեռ շատ ժամանակի կը կարօտի: Ապանութեան առաջին օրերը շատ աւելի զբոսար էր անաչառ գաղափար մը գտնել, այնքան մեծ էր ժողովուրդեան յուզումը, այնքան անկեղծ էր գզացված համակրութիւնը, որ նոյն իսկ թշնամի թերթեր միայն գովաւորով ու ցաւակցութեամբ կը խօսէին, Հոս ու հոն պատահեցան անհասկնալի, որ աննպաստ գաղափար յայտնեցին մահաւորներ նախագահին մասին, եւ այդ պատճառով ալ հալածանքի, ծեծի ենթարկուեցան, մէկ քանի հատ սպանութիւններ ալ տեղի ունեցան: Չարմաշալի չէ որ իրաց այս վիճակին մէջ քաղաքական գաղափարներու առեւտրով զբաղող մարդիկ մէկ ծայրահեղութիւնէն միւսը անցան:

Ամերիկական մամուլի մէկ մասին բարոյական անկումին ասկից աւելի տխուր փաստ չէր

կարելի երեւակայել: Երեւ-Նօրքի «Ճըրնը» օրաթերթը 6—7 տարիներէ ի վեր անհաշտ թըշնամի եղած էր Մաք-Կինլիի անձին եւ վարչութեան, ժամանակէ մը ի վեր այդ լրագրին հրատարակած ծաղրանկարները նախագահը կը ներկայացնէին իբրեւ հարուստներու մէկ ստրուկը, խոշոր ընկերութեանց մէկ թղուկը, որը շաքարի, ածուխի եւ խոշոր ընկերութիւններ ներկայացնող հակառակորդ գումարներուն պատճառելու պաշտօնը ունէր միայն: Այդ պատկերներու տրամաբանութեամբ քաղաքական ոճաբարձր պէտք էր երկրին շտրկակալութեան ջոհէին արժանանալու: Սակայն հոս չէ խնդիր: Բուֆօլօյի ողբերգութեան վայրկենէն երբ կիրքերը փոթորկեցան, ինքզինքը ազատամիտ ընկալաւ գործող թերթը տարապիէն փոխեց իր կարծիքը. իրեն համար Մաք-Կինլիին դարձաւ իմաստուն, ազնիւ մարդ, որ իր երկրին շահերուն նուիրում էր իր կենսքը, մարտիրոս նախագահ մը, որուն մահը անփոփոսարկեցիկ կուրուստ մէր: Նոյն թերթը Բուֆօլօյի համար վատ, անգութ եւ փառամոլ անականները կը շտայէր երեք տարի առաջ, այսօր նախագահ Բուֆօլօյի երկրին փառահովութեան արժանի, անկախ խորհող, հեռատես եւ անձնուէր մարդ մը դարձնէր իրագրական նոյն էջերուն վրա: Այս միայն օրինակ մէք բաւական հասարակ երեւոյթ է մը. — աշխարհի վրա միայն հայկական մամուլ չէ նախատինքի արժանի:

Բարեբախտաբար, երկրին մամուլը մամուլը այս նկարագիրը չունի: Կան թերթեր, նոյն իսկ տիրող վարչութեան կուսակից լրագրեր, որոնք անաչառ ընկալաւորութեան, անկեղծ հայրենասիրութեան փայլուն օրինակներ տուն, մարդիկ երեւցան, որ հասարակաց գգացումը շահագործելու, իրենց մտքի անկախութիւնը ծախելու փորձութիւնէն շատ վեր էին. ահա այդ մարդոց գովեստն ու յարգանքն է, որ Մաք-Կինլիի իրական փառքը կը կազմէ, այդ չափաւոր ու պարզ գնահատումն էր, որ սեւ չըջանալով պատկերներէ, արձաններէ շատ աւելի կենդանի ու միայնակ յիշատակ մը կապանով զգալիս նախագահին:

Պէտք է ըսել թէ երկրին մամուլը մամուլը, հասարակաց բեմերը միաձայնութեամբ դատաւարացեցին ռեպրազընտ. ռճրին դէմ գզացված զայրոյթը ընդհանուր էր, եւ եթէ խիստ կարգապահութիւնը արգելք չը լինէր, ամբողջ շատնց տեսած կըլլար նախագահը սպաննողին դատաւարներ: Յաւային հոն է, որ ամբողջին կոյր կատարութիւնը շահագործող յետադիւսականներ երեւան եկան, ոմանք առաջարկեցին մամուլին ազատութիւնը ստիճանել, ուրիշներ գաղթականութիւնը արգելել, մէկ խելացին ալ կուղէր, որ բոլոր ազատական գաղափարներ ամօժող օտարականներ քաղաքին, հայրենասէրի մը կարծիքով ալ պէտք էր տաք կզդէր մը յատկացնել անխնայականներու ըզնակութեան, հոն հաւաքել Միացեալ-Նահանգաց մէջ գտնվող բոլոր անխնայականները եւ ցերեկ գիշեր կզդին պաշտպանել, որ այդ դեւերը չը փախչին գալու կրկին Նիւմին հանդիսող խռովներու: Եւ տեսայ մարդ մը, որ կառավարիչը առաջնոց բոլոր անխնայականներուն ականջները կտրել, որպէս զի ամեն մարդ գիտնայ եւ զգուշանայ: Ասանք պարզ նշաններն են այն հակազդեցութեան, որ Բուֆօլօյի ռճրին գործեց. քաղաքական ազատութեան անունով գործված եղեւնիքը ասկից տարբեր արդիւնք չեն կրնար ունենալ: Որքան որ անբանաւոր է ակնկալել, որ հանրապետութիւնը փոխէ իր օրէնքներ ու ամենէն կարեւորները, այսքան որ ստոյգ է թէ ասկից վերջ օտարականութիւնը զգոյ աչքով պիտի հետեւի անխնայականներու, որոնք ալ եւս ապագով ապագայան մը չը պիտի կրնան ունենալ օվկիանոսին այս եզրը: Ստոյգ է թէ օտարականներու դէմ առեւտրութիւնը պիտի զօրանայ, մասնաւոր քանի որ շատ տեղացիներ կան, որ օտարականներու միացումէն յաղթուն իրենց անգոր կատաղութիւնը յայտնելու միջոց կը փնտռեն: Անիշխանական կարգ մը հրատարակութիւններ պիտի դադրին կամ գաղտնի տարածուին, արդէն ընթերցողներու մեծ թիւ մալ չունենին, աւելի մեծ կորուստ պիտի ըլլայ երկրին համար օտարականութեան միջամտութիւնը հոս ու հոն գումարուած ժողովներու: Ամերիկայի ժողովուրդը որոշեց ի կրօնի մի անգամ ընդ միշտ ջնջել անխնայականութիւնը երկրէն, սակայն հալածել տարածել ըսել չէ: Աւելի խելացի կերպ չէ ընկերական այս հիւսնադրութիւնը արտադրող պատճառները քննել ու բուժել, քան հիւսնադրութեան արտադրողներու դէմ կըռել: Որքան որ կարելի է ստուգել, նոյն իսկ անխնայականները զայրոյթ կը գլխաւոր գործուած

ռճրին դէմ, որը նախատինք մը է ազատ երկրի մը համար, ուր ամեն բան ըուէով կը վըճառուի, սակայն կառավարութիւնը ինք իր կարգին ազատ մամուլի եւ խօսքի ամենալազիւ գէշքը թող տուած՝ հալածանքի, աքսորի ու կախաղանի միջոցներ ձեռք առնէ, ինչ մեծ տարբերութիւն պիտի գտնենք ընկերութեան եւ ռեպրազընտ մէջ տեղը:

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«НОВОСТИ» լրագրին հետադրում են Մաք-Կինլիի: «Չափազանց մեծ հեղեղումները վաւերացնում եւ շատ ուրիշ տեղերում մինչեւ այժմ չը տեսնված աւերումներ են գործում: Շատ նահանգներում ամբողջ հունձը ոչնչացած է: Կամուրջները քանդված են, տները աւերված, ամեն տեղ երեւում են խեղդվածներ: Դիակներ: Շատ դերեքմանաւոր քարուքանդ են եղել եւ դիակները ջրի հոսանքով քշվել են դէպի ծով: Մօտ 200 դիակներ գտնված են դաշտերում: Գիրուցան եղած: Ընդհանրապէս Սպանիան ներկայումս ահագին տարածութեան վրա ներկայացնում է կատարելալ քայքայման եւ աւերման պատկեր:

—«Star» լրագիրը հաղորդում է, թէ Էդուարդ VII թագաւորը, եւրօպական միապետներից մի քանիսի դիւլոմատիկական միջամտութեան պատճառով, դիմեց իր մինիստրներին եւ առաջարկեց բանակցութիւններ սկսել բօքսերի հետ՝ պարզելու համար այն պայմանները, որոնցով կարելի կը լինէր վերջացնել պատերազմը:

—Աւգանական էմիր Արգուրահման, որ վախճանվեց սեպտեմբերի 20-ին, — ասում է «НОВОСТИ» լրագիրը, — վաղուց եւ լուրջ կերպով հիւսնոյ էր: Շատ անգամ վերջին տարիների ընթացքում ստացվում էին տեղեկութիւններ նրա անուսալի գրութեան մասին, բայց նա ապրեց աւելի երկար, քան բժիշկները գուշակում էին: Արգուրահմանի մահը որոշ նշանակութիւն ունի թէ Ռուսաստանի եւ թէ Անգլիայի համար, որովհետեւ, ինչպէս սովորաբար պատահում է արեւելեան պետութիւնների մէջ, Աւգանական կարող են ծագել ներքին երկպառակութիւններ: Գաղափարաւորութեան հարցի պատճառով Անգլիայի քաղաքականութիւնը Աւգանական փրագործութեամբ միշտ ձգտել է մի նպատակի — դարձնել այդ պետութիւնը մի տեսակ պատուար ռուսաց զորքերի շարժման դէմ դէպի Հնդկաստան: Սրա համար անգլիացիները չէին ինայտու ոչ մի միջոց. նրանք պատերազմներ էին մղում աւաղանացիների դէմ, դիւլոմատիկական միջոց հաստատեցին Կարուլում, ուղարկում էին անգլիական օֆիսներին՝ աւաղանական զորքերը կազմակերպելու եւ նրանց զինավարժութիւնը սովորեցնելու համար, տալիս էին նպաստը չափով նպաստներ էմիրին եւ նրա խորհրդականներին: Արգուրահմանի մահը առիթ է տալիս բարձրացնելու ընդհանուր հարց այն մասին, թէ որքան ընկալուն են Աւգանական յարաբերութիւնները դէպի իր մերձակա հարեւանները: Ռուսաստանը եւ Անգլիան յիշելով յիշեց, որ այդ պետութեան երկրորդ մօտ 700,000 քառակուսի կիլոմետր տարածութիւն ունի, իսկ ազգաբնակչութեան թիւը անցնում է 4 միլիոնի, այն ժամանակ զգուշ չէ հասկանալ, որ Անգլիայի ցանկութիւնը շարունակելու իր հովանաւորութիւնը Աւգանականի վրա, որ սահմանված է 1879 թուի դաշնագրով, բոլորովին անհիմն է: Նոր էմիրի ժամանակ կարող են փոխվել այժմեան բոլոր կարգերը: Նայն իսկ Արգուրահման խանը, որ իր ոյժերի չափով կատարում էր 1879 թուի դաշնագրի պայմանները, շատ անգամ հասկացնել է տուել, որ այդ պայմանները ծանր են նրա երկրի համար:

—«Berliner Tageblatt» լրագիրը ասում է, թէ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններին նայելով, Հայաստանում եւ Գորդաստանում պատահած վերջին անցքերի նշանակութիւնը ստատիկ չափազանցում են: Թիւրքական պաշտօնական շրջաններում հաւատացնում են, որ իրը թէ խաղաղութիւնը ոչ մի տեղ խախտված չէ: «Agence de Constantinople» հաղորդում է, թէ Բիթլիսի վիլայէթում արդէն ձեռք են առնված ամենաեւանդուն միջոցներ խաղաղութիւնը պահպանելու համար, արդիւնեւ այնտեղ լուրեր են տարածվել, թէ քրդական ցեղերը պատրաստութիւններ են տեսնում յարձակումներ գործելու այդ վիլայէթի ազգաբնակչութեան վրա:

—Կ. Պոլսից հետադրում են «Times»-ին տեղեկութիւններ 20-ից: «Գերմանական դեսպանը, Իլդիզ-Կիօսում Զաչելու ժամանակ, խօսեց սուլթանի հետ նահանգների անախտանդիքի գրութեան մասին եւ պնդեց, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել պետութեան մէջ իրերի դրութիւնը բարելոցելու համար»:

—Թիւրքաց կառավարութիւնը այս օրերս դաշնագիր կապեց, որով աւատարեական Գօլդերդէր ֆիլթան լուցկիների վաճառման մեխանիզմում է ստանում ամբողջ թիւրքաց կայսրութեան մէջ: Այդ ֆիլթան կը վճարէ միաւորուած 75,000 ռուբլի: Բայց դրանից Բ. Դուրը կը ստանայ զուտ եկամուտի 60 տոկոս:

—Վիեննայի դիւլոմատիկական շրջաններում,

ինչպէս հաղորդում է «Bappel» լրագրի թղթակիցը, հաւատացնում են, որ մտադրութիւն կայ վերաքննել Բեռլինի դաշնագիրը եւ որ պետութիւնների մէջ այդ առիթով շուտով բանակցութիւններ կը սկսվեն:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՍՏԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

2 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Ներքին գործերի մինիստրութիւնը, Սամարայի նահանգապետի ներկայացրած տեղեկութիւնների համեմատ, բերքի կողմից անբարեխաղող է յայտարարում Սամարայի նահանգի Բուգուրուսլանեան գաւառը:

ԽՐԻՍՏԻԱՆԱ: Ստորոտինգն ընդունեց հում ծխախոտի մաքսահարկը մեծացնելու առաջարկը 175-ից մինչեւ 225 էք, պապիրոսների մաքսահարկը 210-ից մինչեւ 270, սիգարների մաքսահարկը 500-ից մինչեւ 600 էք կիրոգրամի վրա: Օրէնքը կը գործադրվի անհապաղ:

ՏԱՐԿԱՍՏԱՆԻՑ: Հոկտեմբերի 1-ին՝ հրացանի բռնկեց բօքսական հրամանատար Շէման:

ՄՕՍԿՎԱ: Օրնշնեց արքունական ըէպարխիալ զարոյցի նոր չինութիւնը 650 հոգու համար, որ կառուցվել է մինիստրութեան տուած միջոցներով:

ՎԻՏԵԲՍԿ: Այսօր, գէմատիօի հրամանատարների ինստիտուտը նահանգում մտցնելու առիթով մայր եկեղեցում եպիսկոպոսը պատարագ մատուցեց եւ մաղթանք կատարեց: Ժամատաշտութեանը ներկայ էին նահանգապետը, դատաւարական վարչութեան պաշտօնեաները եւ զէմսովոնների բոլոր հրամանատարները, որոնք հանդիսուոր կերպով երդում տուեցին:

ՄՕԳԻԼԷՎ: Մայր եկեղեցում, նահանգապետի եւ վարչութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ, սրբաւոն Միսայիլ պատարագ մատուցեց եւ մաղթանք կատարեց, որից յետոյ զէմսովի պիսարները երդուեցին:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒԼԱՎ: Տեղի ունեցաւ Վիրսովի հանդիսուոր տօնախմբութիւնը, նահանգապետի նախագահութեամբ, բժշկական եւ նորերս հիմնված գիտական ընկերութեան միացեալ ժողովում:

ԿԱԶԱՆ: Բժիշկների ընկերութեան հանդիսուոր տարեկան ժողովում, համալսարանի հանդիսուոր դահլիճում, տեղի ունեցաւ համալսարանի պատուաւոր անդամ յայտնի գիտնական Վիրսովի տօնախմբութիւնը:

ԽՐԻՍՏԻԱՆ: Պոլսովսկայա անուանված տօնախմբաւոր բացվում է: Ապրանքների օտարական քանակութեամբ են ստացվում: Գնողներ շատ չը կան: Բերքը հարուստ միջակից ստոր է համարվում, այդ պատճառով էլ առեւտրի մէջ դժուար թէ կենդանութիւն լինի:

ԲԱՆՏԻՄՕՐԱ: Այստեղի նահանգական դատարանը վճեց, որ այն լրացուցիչ մաքսահարկը, որ դրված է Ռուսաստանից ներմուծվող շաքարի վրա, օրինական հիմք ունի, որովհետեւ, դատարանի կարծիքով, ռուսաց կառավարութեան ստեղծած դրութիւնը բաֆինադի գործածանքների համար համագործ է պրէմիաներին:

ՆԻԻ-ՆՕՐԿ: Վալինգաւոնից «New-York-Herald» լրագրին հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Բալթիկայի նահանգական դատարանի վճիռ դէմ, որն ընդունեց, թէ Ռուսաստանից ներմուծվող շաքարի վրա դրված լրացուցիչ մաքսահարկը օրինական հիմք ունի, գնագատ կը ներկայացրվի բարձրագոյն դատարանին:

ՎԻԷՆԱ: Այսօր սպասվում է, որ պէտք է յայտարարվի հանգուցեալ թագաւորանից Էրցհերցոգ Բուգոֆի աղկալ էրցհերցոգուհի Ելիսաւետա-Մարիայի պրինց Օտտօն Վինդիգրեյի հետ նշանադրվելու մասին:

ՊԷԿԻՆ: Կայսերական հրովարտակով հաստատվում են երեք նոր պետական պաշտօններ եւ վերացվում են շատ մանր պաշտօնեաների պաշտօնները:

ԲԻԱՐԻԻՑ: Ռուսաց եկեղեցում տեղի ունեցաւ իշխան Բարեաւորնակու թաղման կարգը, իշխանը մեռաւ 21 տարեկան: հանգուցեալ իշխան Ալեքսանդր Բարեաւորնակու հօրեղբոր օրդին էր եւ Իւրէյսկայա իշխանուհու փեսացուն: Եկեղեցում խիստ շատ աղօթողներ կային: Մարմինը երկաթուղու կայարանը բերին եւ կուղարկվի Պետերբուրգ:

ԽՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

